

արշումաքամ եղած մեր երկիրը վերապրել է իր այս վերածննդի տարիներին, արդյունաբերության հսկաների լիաթոր գործունեությունը, շինարարության աննախընթաց ծավալումը, գիտական հիմնարկների և լուսավորության աղբյուրների աճը, Հայկական գիտությունների ակադեմիան, Արևանի պետական համալսարանը և Մաշտոցի անվան Վեհապետի Մատենադարանը—այս բոլորը խորապես հուզել են ֆրանսիացի հայագետին:

—Ասկե հետևն տարի առաջ,—ասաց նա Կիսթոթյունների ակադեմիայի նիստերի դահլիճում ունեցած իր ելույթում,—«Վ կարող էր երևակայել, թե այսպիսի կարև ժամանակամիջոցի մը մեջ կվերածնվի Ձեր երկիրը այնպես, որ Հայաստանի հողի վրա ստեղծված կըլլա Հայկական գիտություններու ակադեմիա մը՝ գիտնականներու իր պատկանելի բանակով: Այս երկու բաներու՝ «Հայկական» և «ակադեմիա» բաներու զուգակցումը բազմանշանակալի է ինձի համար, որպես Ձեր անցյալի պատմությունը իմացողի:

Բազմազրազ անցավ պրոֆ. Ֆելդի տոբյան՝ շրջապայություններ գնալի Հայաստանի պատմական վայրերը, հուշարձանները, հանդիպումներ ու շփումներ՝ մեր Հանրապետության գիտնականների հետ, նա ձեռագրեր համեմատեց Մատենադարանում՝ Փավստոս Բուզանդի վերաբերյալ, դասախոսություններ կարդաց՝ «Հայագիտությունը նվիրադրում» թեմայով, և այլն, և այլն: Մովեստական Հայաստանում ծավալված

հայագիտական աշխատանքների մասին պրոֆ. Ֆելդին այսպես ամփոփեց իր ազավորությունները իր մի գրույցի ժամանակ.

—Արևմուտքի մեջ հայերու կողմե հայագիտության մշակումը առնվազն նվազելու վրա է, առաջվա խանգով չեն գրադիր: Թայց ատիկա իրենց հանցանքը չէ, որովհետև կյանքի պայմանները թույլ չեն տալ գրադրելու, մեծ մասամբ ուսուցչությամբ կը գրադրեն և հետագիտական աշխատանքներ չեն կրնար քնել: Թարեք թախաբար Հայաստանը նիշտ ժամանակին բռնեց հայագիտության շահը, այստեղ ալ հայագիտությունը ծաղկեցավ: Պետք է բռնեմ, որ հայագիտության այս բացառիկ արտադրությունը թե՛ քանակի և թե՛ որակի առաջնությունով ինձի շղարմացուց. թեև չէի ստանալ գիրքեր, բայց գիտեի որ հայագիտությունը այստեղ իր արժանի տեղը գտած է: Արևելքն որ եթե զարմացած չմնացի, ապա զմայլած՝ անպայման: Իսկապես՝ հայագիտությունը այստեղ կմշակվի նիշտ այսպես, ինչպես ֆրանսագիտությունը Ֆրանսիայի մեջ, գերմանագիտությունը՝ Գերմանիայի մեջ—հավասար կերպով,—առանձին շեշտով ասաց նա:

Հանձին պրոֆ. Ֆելդի նվիրադրում ապրում և ստեղծագործում է բեղմնավոր գրչի տեր, հայագիտության յայն ոլորտներ ընդգրկող հմուտ և համակողմանի կարողություններով սփռված ձեռնհաս մի հայագետ:

Լ. ԽԱՉԻՐՅԱՆ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՊՈՒՍԻ ԳՅՈՒՂԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: Հրատարակություն Հապուսի գյուղի հայրենասիրաց բնակչության, Բոստոն, տպարան «Պայքար», 1963, 263 էջ, նկարազարդ, մեկ քարտեզ:

Խարբերդին մոտիկ, շուրջ 350—400 տուն ամբողջությամբ հայ բնակչություն ունեցող գյուղի, հայ ժողովրդի մի փոքրիկ մասնիկի հապուսեցիների հուշամատյանն է:

Ժողովածուում մանրամասն տեղեկություններ են տրված գյուղի կրթական հիմնարկությունների և գործիչների մասին, հողագործության, առևտրի և արհեստների մասին, նկարագրված են ընտանեկան կյանքն ու տոները, տեղեկություններ են տրված նաև գյուղում օգտագործված հետաքրքիր դեղերի և դարմանների, գյուղի կենցաղի ու սովորությունների մասին, որոնք կարող են նպաստել հայ ազգագրության պատմությանը:

Հայերենի զավառարարառնների ուսումնասիրության համար արժեքավոր են Գ. Առաքելյանի հավաքած «Հապուսիի առածները» (էջ 77—88) և Գ. Մինասյանի կազմած «Գավառականի բառարան» (էջ 89—99) ուսումնասիրությունները, որոնք տեղ են գտել ժողովածուում ազգագրական զանազան այլ նյութերի հետ:

Այս հուշամատյանը պատմական կարևոր նյութեր է պարունակում Հապուսիի խաղաղ շինարարական շրջանի պատմության, 1895 թ. հերոսական պաշտպանության և 1895—1896 թթ. կոտորածից հետո անցած տարիների, ինչպես և կոտորածի ու տարագրության մասին՝ ականատեսների մանրամասն հիշողություններով:

Հատորը ճոխացված է սփյուռքահայ զանազան գաղութներում գոյություն ունեցող Հապուսի գյուղի հայրենակցական միությունների ստեղծ-

ման ու այդ ընկերությունների գործունեության մասին բազմաթիվ տեղեկություններով ու նկարներով: Գրքի վերջում (էջ 237—261), անդիւրեն լեզվով համառոտ տեղեկություններ կան Հապուսի գյուղի և նրա ընկերների մասին:

Meillet A. ÉTUDES DE LINGUISTIQUE ET DE PHILOLOGIE ARMÉNIENNES. I. Recherches sur la syntaxe comparée de l'Arménien suivies de la composition en arménien. Lisbonne, Imprensa Nacional de Lisboa, 1962, 185 p. (Bibliothèque Arménienne de la Fondation Calouste Gulbenkian).

Այս հատորում ընդգրկված ուսումնասիրությունները հաջորդական հոդվածների ձևով լույս են տեսել 1897—1914 թթ. Փարիզի լեզվաբանական ընկերության Հիշատակարաններում՝ երկար տարիների ընդմիջումով: Ներկա հատորի նախարանում պրոֆ. է. Բենվենիստրյարձը է զնահատում Մեյլեի ծառայությունը Հայերեն լեզվի ուսումնասիրության բնագավառում:

«Հայերեն բանասիրության և լեզվագիտական ուսումնասիրություններ» հատորի սկզբում գետեղված է «Հետազոտություններ հայերենի համեմատական շարահյուսության վերաբերյալ» մասը, որտեղ ընդգրկված են հետևյալ հինգ գլուխները՝ Ցուցականներ (էջ 5—37), Ածականի համաձայնության կանոններ (էջ 39—59), Պարագանների օգտագործումը (էջ 61—82), Բայերի դիմավոր ձևերի գործածությունը (էջ 83—122), Գոյական անունների հոգնակի ձևերի գործածությունը (էջ 123—157):

Հայերեն լեզուն միշտ իր նախասիրության բնագավառն ընտրած գիտնականի «Շարադրությունը հայերենում» արժեքավոր աշխատությունը, որը ընայած անցած երկար տարիներին երբեք չի հնացել, գետեղված է գրքի վերջում (էջ 159—184):

Աճեմյան Գևորգ. ՏԵՍԻՍԱԿԱՆ ՔՆՆԱԿՆԱՍԿԱԿԱՆ ՓՈՐՁԵՐ, Բեյրութ. տպարան «Սեան», 1962, 159 էջ:

Այս հատորի մեջ հավաքված են հեղինակի դրականագիտական վերլուծությունները և տեսական հոդվածները, որոնք լույս են տեսել «Ափյուռք» շաբաթաթերթի էջերում:

«Տեսական քննադատական փորձեր»-ում գետեղված են Գ. Աճեմյանի հետևյալ վեց ուսումնասիրությունները. «Վիպագրության արվեստը» (էջ 1—79), «Գրականության սահմանումը և ակնարկ սփյուռքի հայ գրական զարթոնքին վրա» (էջ 81—108), «Սիտք և գրականություն» (էջ 109—121), «Արվեստ գրախոսության» (էջ 123—142), «Մուսան մեր գրականության մեջ»

(էջ 143—150), «Անդուգական բանաստեղծը կամ բանաստեղծներ» (էջ 151—159):

Դրականության և արվեստի վերաբերյալ տեսական ընդհանուր դատողությունների կողքին կարգում ենք հատկապես սփյուռքահայ գրականության, քննադատության և արվեստագիտության վերաբերյալ հեղինակի կարծիքները, որոնք համեմատված են հայ և օտարազգի ստեղծագործողների և նրանց ստեղծագործությունների մասին զնահատականներով:

Գևորգ Աճեմյանը քննադատում է հայ սփյուռքի մեջ գրական քննադատության ողորդի վիճակը, որի հետևանքով չեն կործանվում ոչընչությունները և քաջալերվում են միջակությունները: Նա առաջ է քաշում այն միտքը, թե «նախընտրելի է տասն անգամ ներշնչվել ու մեկ սնկալ գրել, քան փխսնակ մեկ ներշնչումով տասն անգամ մորտեյլում» (էջ 149):

ՊԱՅՔԱՐ ՏԱՐԵԳԻՐՔ, 1962—1963 (Բոստոն), 200 էջ, նկարազարդ:

Տարեգիրքը բաղկացած է երկու մասերից՝ Ա մաս՝ Գրական էջեր (էջ 3—90), Բ մաս՝ Միտք և Արվեստ (էջ 91—200):

Ժողովածուում տեղ են գտել ինչպես սովորաբար գրողների, այնպես էլ հիմնականում սփյուռքահայ հայտնի գրողների գրական ստեղծագործությունները և արտասահմանյան հայ գաղութների հասարակական ու արվեստի գործիչների գրականագիտական, արվեստագիտական, հրապարակախոսական, կենսագրական, հուշագրական և այլ աշխատությունները:

Տարեգիրքը, որը լույս է տեսել շքեղ տպագրությամբ, մի ծաղկաբաղ է սփյուռքահայ ժամանակակից գրողների քերթվածների և արձակ պատմվածքների, որոնցում գլխավորապես արտացոլված է դադութահայ կյանքը:

Ժողովածուի էջերում տեղ են գրավել Վահե Հայկը, Ալեքսանդր Սարուխանը, Բենիամին Նուրիկյանը, Մառի Աթմաճյանը, Ընովք Արմենը, Ստեփան Շահպազը, Արամ Սրեմյանը, Նրշան Շահենը, Խորեն Տետեյանը, Էդմոն Կոտալազյանը, Գեր և շատ ուրիշներ (թվով հիսունից ավելի հեղինակներ):

Պատմա-բանասիրական և դրական-գեղարվեստական այս ժողովածուն հերթական շարունակությունն է Ամերիկայում երկու տասնամյակներ անդադար լույս տեսնող «Պայքար» դրական-գեղարվեստական և հասարակական տարեգրքի:

Avedissian Onnig. PEINTRES ET SCULPTEURS ARMÉNIENS DU 19-ÈME SIÈCLE À NOS JOURS. Publie par les «Amis de la Culture Arménienne». Le Calre, Imprimerie de l'Institut Français d'Archéologie Orientale du Calre, 1959, 493 p., III.

Հայկական գեղարվեստի մասին բազմաթիվ ոլորտներում հաստատված ուսումնասիրությունների հեղինակ, արվեստագետ Օննիկ Ավետիսյանի տասր տարիների տքնաչափ աշխատանքի արդյունքը հանդիսացող այս լայնաշունչ հատորը մի իսկական հիշատակարան է նվիրված հայ արվեստագետներին:

«Հայ նկարիչներ և քանդակագործներ» երկասիրությունը ճշգրտում է հետաքրքրությունները ոչ միայն նրանց, որոնք վաղուց ի վեր հիացել են հայ նկարիչների և քանդակագործների կողմից ամենուրեք ցուցադրված նշանավոր գործերով, և որոնք ուզում էին ավելի իմանալ այս ժողովրդի արվեստի մասին», — գրում է Միացյալ Արևելյան Ռեսպուբլիկայի հանրապետական շրջանի մշակույթի մինիստր ղեկավար Ս. Օքաշան գրքի առաջարանում:

Հայ ժողովուրդը իր հայրենիքից բազմիցս դադարահանվելուց հետո, որտեղ էլ որ գնացել է, բնակվելու, միշտ իր հետ է տարել իր մշակույթը: Հետևապես գրել հայ նկարիչների ու քանդակագործների պատմությունը՝ նշանակում է գործ ունենալ աշխարհի համարյա այն բոլոր երկրների հետ, որտեղ հայերը ունեցել են իրենց լիք թե շատ աչքի ընկնող գաղթավայրեր:

Գրքի առաջարանից, նախարանից, հայ ժողովրդի պատմության համառոտ ժամանակաշրջանից հետո գետնից է Ս. Ավետիսյանի ընդհանուր ներածությունը, որտեղ նշված է հատկապես հայկական ճարտարապետության ինքնուրույնությունը, որն իր ազդեցությունն է ունեցել արևմտյան ճարտարապետության վրա և այսօր գրավում է մի կարևոր տեղ ընդհանրապես արվեստի պատմության մեջ:

Գիրքը բաղկացած է երկու գլուխներից: Գրքի առաջին՝ «Հին արվեստը» գլխում հեղինակը յնթերցողներին ներկայացնում է հայկական նկարչության և քանդակագործության պատմությունը սկսած իրենց ծագումից մինչև XVIII դարը ներառյալ՝ որտեղ ընդհանուր գծերով կանգ է առնում շուրջ 14 դարերի մի երկար և հետաքրքիր ժամանակաշրջանի վրա, որը մեծ նշանակություն ունի ինչպես գործերի որակով և ինքնուրույնությամբ, այնպես էլ այն պայմաններով, որոնցում նրանք ստեղծվել են: Այսուհետև Ավետիսյանը խոսում է աշխարհի շուրջ կողմերում ցրված շուրջ 23000 ձեռագրերի մանրանկարչական և զարդարվեստի ժանրի մասին: Հեղինակը չի բավարարվել միայն իր սեփական ձեռագրերի ուսումնասիրությամբ, նա

բարեխղճորեն ուսումնասիրել է նաև մինչև այդ ժամանակ տեսած գրականությունը հայկական մանրանկարչության և զարդագործության մասին: Հեղինակը ընդարձակորեն անդրադառնում է հայերեն այբուբենի հարցին, գրության և նրա էությունից խնդրին, զարդագիր և տպագրական նշանագրերին և այլն: Նա հանգամանորեն խոսում է ձեռագրերի կարևորության և բովանդակության, նրանց հիշատակարանների, կին դեկորների արվեստի հարցերին, գրում է հին վանքերի մասին, որոնք հանդիսացել են մշակութային կարևոր կենտրոններ, որտեղ ծաղկել են ձեռագրերի մանրանկարչական և զարդագործական արվեստները: Հայկական մանրանկարչական և զարդարվեստի տեխնիկայի և ոգտագործված նյութերի մասին խոսելուց հետո, հեղինակն անցնում է ձեռագրերի մանրամասն ուսումնասիրությանը, որը ճշգրտում է բազմաթիվ արտատպումներով: Առաջին գլխում է գտնվում նաև «Մոնումենտալ նկարչություն» ենթաբաժինը՝ հայկական որմնանկարչության, խճանկարչության և քանդակագործության նկարագրությամբ:

Աշխատության գլխավոր մասն է կազմում երկրորդ գլուխը, որը կոչվում է «Արդի ժամանակներ»։ Այստեղ հեղինակը ներկայացնում է հայ նկարիչներին և քանդակագործներին XIX դարից մինչև մեր օրերը: Հայաստանի արվեստագետներին հաջորդում են սփյուռքահայ նկարիչները՝ ըստ իրենց ապրած ու ստեղծագործած երկրների: Այս գլխում հեղինակը առանձին ենթաբաժնում գրում է նաև հայ ծաղրանկարիչների մասին, իսկ գլխի երկրորդ բաժնում ընդգրկված են XIX և XX դարերի հայ քանդակագործները՝ դարձյալ ըստ երկրների խմբավորված:

«Հայ նկարիչներ և քանդակագործներ» դրությունը ընդգրկված են 350-ից ավելի հայ արվեստագետների կենսագրությունները, ինչպես նաև զանազան ծանոթություններ նրանց արվեստի մասին: Գիրքը նկարագրողված է քսան պատկերով, վեց սեփա և հինգ հարյուրից ավելի միապույն նկարներով:

Աշխատությունը գրված է պարզ ու սեղմ ոճով, որն այն դարձնում է շատ հաճելի և պարզաբան: Արվեստագետ հեղինակը օգտագործել է հայ և օտարազգի բազմաթիվ գիտնականների կարևորագույն ուսումնասիրություններ:

Հ. ՄԵՔԵՐՅԱՆ